



FINCA®

Ավագ իրավաբան

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- Համակարգել, կազմակերպել և հետևել իրավաբանական բաժին ներկայացված ժամկետանց պարտավորություններին վերաբերող գործերով պարտավորությունների հավաքագրման գործընթացները,
- Կատարել գործերի ուսումնասիրություն, գործերի ընթացքի մասին պարբերաբար զեկուցել ղեկավարին,
- Իրականացնել մոնիթորինգ՝ պարտավորությունների հավաքագրման գործընթացներում առկա խնդիրները դուրս բերելու ուղղությամբ,
- Հետևել յուրաքանչյուր գործի ընթացքին, համակարգել գործերի ընթացքի վերաբերյալ հաշվետվությունը, կազմակերպել իրավաբանական բաժնի փաստաթղթաշրջանառությունը,
- Մշակել և ղեկավարությանը ներկայացնել տարբեր գործընթացների բարելավման և արդյունավետության բարձրացման առաջարկներ,
- Ըստ անհրաժեշտության՝ պատրաստել վճարման կարգադրություններ, դիմումներ, միջնորդություններ, տեղեկանքներ և այլ բնույթի իրավաբանական փաստաթղթեր,
- Իրականացնել պարտքերի հավաքագրում/ժամկետանց վարկերի վերականգնում վարկի ժամկետանց լինելու բոլոր փուլերում (դատարան դիմելուց առաջ և հետո)՝ համաձայն սահմանված ընթացակարգերի և քաղաքականության,
- Անհատական վերաբերմունք ցուցաբերել յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ՝ գտնելով լուծումներ, որոնք միաժամանակ կբավարարեն և հաճախորդի պահանջները և կհամապատասխանեն կազմակերպության արժեքներին ու սկզբունքներին,
- Ներկայացնել կազմակերպության շահերը Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում՝ միաժամանակ սերտորեն համագործակցելով վերջինիս հետ պարտքերի հավաքագրման նպատակով,
- Այլ խնդիրներ լուծում՝ ըստ անհրաժեշտության:

ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ՝

- Բարձրագույն իրավաբանական կրթություն,
- Առնվազն 1 տարվա աշխատանքային փորձ պարտքերի հավաքագրման և ԴԱՀԿ ծառայության հետ համագործակցության ոլորտում,
- Նախընտրելի է ղեկավարման փորձ,
- Դատական ակտերի հարկադիր կատարման, քաղաքացիական օրենսդրության և քաղաքացիական դատավարության լավ իմացություն,
- Շփման և բանակցություններ վարելու գերազանց հմտություններ,
- Թիմային աշխատանքներ կազմակերպելու և վարելու ունակություն,
- Վերլուծական և համադրական մտածողություն,
- Սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն,
- Գրավոր հաղորդակցության գերազանց հմտություններ,
- MS Word, Excel համակարգչային ծրագրերի իմացություն:

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ՝ 20.03.2016

ԻՆՉՊԵՍ ԴԻՄԵԼ

Եթե Ձեր տվյալները համապատասխանում են թափուր պաշտոնի պահանջներին, խնդրում ենք ուղարկել Ձեր ինքնակենսագրականը հետևյալ էլեկտրոնային հասցեին՝ hr@finca.am էլ. նամակի վերնագրում լրացնելով՝ **“Senior Lawyer - Your Name Surname”**:

Մրցույթին մասնակցելու կհրավիրվեն ներկայացված պահանջներին առավել համապատասխանող թեկնածուները:

* Խրախուսվում են վաղաժամկետ դիմումները: